ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՇՁԲ-20/3/1

ք. Աշտարակ «17» հունիսի 2020 թ.

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Թ.Շահվերդյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Շինաշխարհ ՍՊԸ -ն, ի դեմս տնօրեն Ա.Մանուկյանի--ի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **ջերմամեկուսացման աշխատանքների** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից, կատարման ժամկետը սահմանվում է՝ 180 օրացուցային օր :Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային

ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 89939804 (ութսունինը միլիոն ինը հարյուր երեսունինը հազար ութ հարյուր չորս) ՀՀ դրամ, որից 14989967 (տասնչորս միլիոն ինը հարյուրութսունինը հազար ինը հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: ***Պայմանագրի գնի 50 տոկոսը սուբսիդավորվում է ՀՀ Կառավարության կողմից և 25 տոկոսը ՄԱԿՀԾ-ի կողմից, որը փրամադրվելու է ավարտական ակտը ստորագրելուց հետո սուբվենցիաների փրամադրման կարգի և ժամկետների համաձայն:***

Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

1-ին չափաբաժին 57620468 (հիսունյոթ միլիոն վեց հարյուր քսան հազար չորս հարյուր վաթսունութ) ՀՀ դրամ՝ որից 9603411 (ինը միլիոն վեց հարյուր երեք հազար չորս հարյուր տասնմեկ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

2-րդ չափաբաժին 32319336(երեսուներկու միլիոն երեք հարյուր տասնինը հազար երեք հարյուր երեսուներեք) ՀՀ դրամ՝ որից 5386556 (հինգ միլիոն երեք հարյուր ութսունվեց հազար հինգ հարյուր հիսունվեց) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետարան	**"Շինաշխարհ" ՍՊԸ**
ՀՀ Արագածոտնի մարզ	**ք. Երևան, Գոգոլի փակուղի 32/1**
Ք.Աշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7	**ՀՎՀՀ - 00068694**
ՀՎՀՀ՝ 05005705	**Բանկ - "Հայբիզնեսբանկ" ՓԲԸ**
ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	**ՀՀ - 1150000368440100**
Հ/Հ 900442101185	**Էլ.փոստ – amshinashkharh@mail.ru**
Համայնքի ղեկավար	**հեռ. 044 29-19-45**
----------Թ.Շահվերդյան	**----------Ա.Մանուկյան**
	/ստորագրություն/
	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
« 17 » հունիսի 2020 թ. կնքված
N ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՇՁԲ-20/3/1 ծածկագրով պայմանագրի

Չափաբաժին 1

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

ջերմամեկուսացման աշխատանքներ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆ 9 ԲԱՋՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

NN	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Ծավալը	1 միավորի ընդհանուր արժեքը /հազ. դր./	Ընդհանուր արժեքը հազ. դրամ
1	3	4	5	6	7
	Հարդարման աշխատանքներ				
1	Շքամուտքի արտաքին դռան ներքին շեպերի գաջիավաղի քանդում	մ²	15,56	0,95	14,782
2	Շքամուտքի ներքին պատերի գաջի սվաղի մասնակի նորոգում	մ²	150,3	2,00	300,600
3	Շքամուտքի ներքին պատերի վրայի գոյություն ունեցող ներկածածկույթի մաքրում, մանր ճեղքերի եւ անցքերի լցնումով	մ²	811,3	0,30	243,390
4	Շքամուտքի ներքին պատերի ներկում լատեքսային ներկով, բարելավված որակի, ծեփամածկումով	մ²	360,6	1,50	540,900
5	Պատերի յուղաներկում բարելավված որակի, ծեփամածկումով	մ²	450,7	1,50	676,050
6	Շքամուտքի արտաքին դռան ներքին շեպերի գաջե սվաղում	մ²	15,56	2,50	38,900
7	Շքամուտքի արտաքին դռան ներքին շեպերի ներկում լատեքսային ներկով, բարելավված որակի, ծեփամածկումով	մ²	15,56	1,50	23,340
8	Շքամուտքի առաստաղի գաջի սվաղի մասնակի նորոգում	մ²	268	2,50	670,000
9	Շքամուտքի առաստաղի վրայի գոյություն ունեցող ներկածածկույթի մաքրում, մանր ճեղքերի եւ անցքերի լցնումով	մ²	268	0,30	80,400
10	Շքամուտքի առաստաղների ներկում լատեքսային ներկով, բարելավված որակի, ծեփամածկումով	մ²	268	1,50	402,000
11	Առաջացած շին. աղբի հավաքում, բարձում եւ տեղափոխում 13կմ	տ	8	2,30	18,400
12	Մետաղական ճաղավանդակների ներկում 2 տակ յուղաներկով	տ	9,504	28,00	266,112
13	50*30 չափսերի փայտ բռնակների համար	գծմ	457,2	1,50	685,800
14	Ներկում յուղաներկով	գծմ	76,1	1,00	76,100
	Ընդամենը /հազ. դր./				**4036,774**
	Բացվածքներ				
1	Արտաքին մետաղապլաստե դռների ապամոնտաժում	մ²	26,95	2,0	53,900
2	Անոդացված այլումինե դուռ -ապակեփաթեթը՝ երկշերտ -փաթեթի կտրվածքը՝ 4մմx12մմx4մմ -պրոֆիլի լայնքը՝ ոչ պակաս 60մմ -պրոֆիլի գույնը արծաթագույն -կոնստրուկցիան՝ բացվող -խուլ մասերը՝ ջերմամեկուսիչ շերտով	մ²	5,76	75,0	432,000

	-բացվող				
3	Անոդացված այլումինե դուռ				
	-ապակեփաթեթը՝ երկշերտ				
	-փաթեթի կտրվածքը՝ 4մմx12մմx4մմ				
	-պրոֆիլի լայնքը՝ ոչ պակաս 60մմ				
	-պրոֆիլի գույնը արծաթագույն	մ^2	1,43	70,0	100,100
	-կոնստրուկցիան՝ բացվող				
	-խուլ մասերը՝ ջերմամեկուսիչ շերտով				
	-չբացվող				
4	Մետաղապլաստե ներքին դռներ				
	-ապակեփաթեթը՝ երկշերտ				
	-փաթեթի կտրվածքը՝ 4մմx12մմx4մմ				
	-պրոֆիլի լայնքը՝ ոչ պակաս 60մմ				
	-պրոֆիլի խցերի քանակը՝ ոչ պակաս 3	մ^2	23,76	38,5	914,760
	-մետաղական միջուկի հաստությունը՝				
	ոչ պակաս 1.2մմ				
	-պրոֆիլի գույնը՝ սպիտակ				
	-կոնստրուկցիան՝ բացվող				
5	Ավտոմատ դռան փակող սարք /չափաբերիչ/	հատ	1	10,0	10,000
	Ընդամենը /հազ. դր./				**1510,760**
	Ջերմամեկուսացման աշխատանքներ				
1	Պատուհանների բացվածքների պարագծով 300մմ՝ հանքային բամբակի տեղադրում՝ 80մմ, խտությունը՝ 100-140 կգ/մ^3/ ջերմահաղորդականությունը՝ ≤ 0.040 Վտ/մ0/Կ, որն ամրացվում է պոլիմերացեմենտային հատուկ սոսնձով	մ^2	475,8	4,5	2141,100
2	Արտաքին դռների 900*2400մմ բացվածքների պարագծով 300մմ՝ հանքային բամբակի տեղադրում՝ խտությունը՝ 100-140 կգ/մ^3/ ջերմահաղորդականությունը՝ ≤ 0.040 Վտ/մ0/Կ, որն ամրացվում է պոլիմերացեմենտային հատուկ սոսնձով	մ^2	17,04	4,5	76,680
3	Շենքի ճակատային մասերի ջերմամեկուսացում՝ XPS - փրփրապոլիստիրոլ սալով 80մմ, խտությունը՝ 30-40 կգ/մ^3/ ջերմահաղորդականությունը՝ ≤ 0.034 Վտ/մ^0/Կ, որն ամրացվում է պոլիմերացեմենտային հատուկ սոսնձով	մ^2	2221,2	5,5	12216,600
4	Շենքի ճակատային մասերի /անկյուններում եւ պարագծով/ անկյունակների տեղադրում (լրացուցիչ ուժեղացում ոչ մետաղական ցանցով)	գմ	96	3	288,000
5	Պոլիմերացեմենտային հատուկ սոսնձով սվաղ ապակեթելքային ցանցով +3.00 - +28.2 նիշում	մ^2	1974,6	3,5	6911,100
6	Պատերի սվաղում ցեմենտ-ավազային շաղախով 30մմ հաստությամբ/ ամրանային ցանցի վրա Փ3Բp 50x50 բջիջներով	մ^2	415	4,5	1867,500
7	Ճակատների ներկում	մ^2	2221,2	0,85	1888,020
8	Շենքի բոլոր անկյուններում, պատուհանների և դռների պարագծով լրացուցիչ ուժեղացում թիթեղյա անկյունակով 50*50	գծմ	1023	3,5	3580,500
9	Արտաքին պատուհանագոգերի պատում՝ ցինկապատ թիթեղով 0.55x1600x200մմ	մ^2	72,96	5,5	401,280
10	Արտաքին շեպերի բարձրորակ սվաղ ց/ավազե շաղախով	գծմ	808	4,5	3636,000
11	Վերամբարձի շահագործում	մեք/ժամ	30	20	600,000
	Ընդամենը /հազ. դր./				**33606,78**
	Տանիք				
1	Ջրամեկուսիչ տոլի շերտի քանդում	մ^2	328,4	0,15	49,260
2	Տանիքի ց/ավազե շերտի քանդում 50մմ հաստ.	մ^2	328,4	0,2	65,680
3	Խարամի շերտի քանդում	մ^3	49	2,4	117,600

4	Թեթև բետոնե շերտի քանդում 80մմ	մ³	26,272	10,5	275,856
5	Առաջացած շին. աղբի հավաքում, բարձում եւ տեղափոխում 13կմ	տ	106	2,3	243,800
	Ընդամենը /հազ. դր./				**752,196**
	Տանիքային ջերմամեկուսացման աշխատանքներ				
1	Գոլորշամեկուսիչ շերտ՝ պոլիպրոպիլենից, խզման բեռնվածքը ոչ պակաս 1068/890 Ն/5սմ, գոլորշաթափանցման դիմադրությունը ոչ պակաս 7քմ.ժ.Պա/մգ ,ջրակայունությունը ոչ պակաս 1000մմ ջ ս /համարժեք/	մ²	355	1,20	426,000
2	Ջերմամեկուսիչ շերտի պատրաստում հանքաբամբակից 15-25 կգ/խմ խտությամբ, 150մմ հաստությամբ, /50մմ 2շերտով կիսակոշտ սալեր/ ջերմահաղորդականության գործակիցը՝ մինչև 0,04 Վտ/մ.աստ.ցելս.	մ²	355	2,00	710,000
3	Ջրամեկուսիչ, գոլորշաթափանց՝ պոլիպրոպիլենից հրակայուն, խզման բեռնվածքը ոչ պակաս 330/180 Ն/5սմ, ջրային գոլորշու հոսքի խտությունը ոչ պակաս 1000գ/քմ. 24ժամ, ջրակայունությունը ոչ պակաս 1000մմ ջ.ս	մ²	355	2,00	710,000
4	12մմ հաստ.երբատախտակից անցուղիների հատակի պատրաստում	մ²	16,5	10,00	165,000
5	Փայտյա 160x80մմ չորսուներից երբատախտակի հատակի հենարանների տեղադրում	մ³	0,95	150,00	142,500
6	40x40x4 մմ ալյումինե անկյունակներից եզրակալների տեղադրում,L=100mm,p.600մմ	կգ	168	1,00	168,000
7	Հորանների ջերմամեկուսացում փայլաթիթեղապատ ապակեբամբակով 50մմ հաստ.	մ³	2,85	30,00	85,500
9	Փայլաթիթեղապատ ապակեբամբակի արժեքը 50մմ հաստ.	մ²	57	3,05	173,850
	Ընդամենը /հազ. դր./				**2580,850**
	Էլեկտրատեխնիկական աշխատանքներ				
1	ԼԵԴ լուսատու հակավանդալային, շարժման և լուսավորության տվիչներով, գիշեր- ցերեկ ,8Վտ, 4000-4500K, 700Lm	հատ	36	7	252,000
2	ԼԵԴ լուսատու հակավանդալային, շարժման և լուսավորության տվիչներով, գիշեր- ցերեկ, 11Վտ, 4000-4500K, 1070Lm	հատ	11	9	99,000
3	Պլաստիկ երկտեղանոց տուփ, IP 40, մալուխային խցուկներով, արտաքին տեղադրման	հատ	1	2,5	2,500
4	Փոփոխական հոսանքի ավտոմատ անջատիչ 2Px16A	հատ	1	5	5,000
5	Հողանցման հաղորդաձող	հատ	1	5	5,000
6	Բաժանման տուփ IP45, 100x100x60մմ մալուխային խցուկներով/	հատ	18	1,5	27,000
7	ВВГ$_{нг}$ 3x2.5մմ² հատվածքով, պղնձե ջիղերով, մեկուսացված մալուխի անցկացում	գմ	20	0,85	17,000
8	ВВГ$_{нг}$ 3x1.5մմ² հատվածքով, պղնձե ջիղերով, մեկուսացված մալուխի անցկացում	գմ	269	0,35	94,150
9	ՊՎՔ տուփախողովակ 25x16մմ	գմ	289	0,4	115,600
10	ՊՎՔ խողովակ Փ20մմ	գմ	20	0,35	7,000
11	Միջհարկային ծածկի մեջ անցքի բացում	հատ	18	1,5	27,000
12	Անցքերի լցափակում	հատ	18	2,5	45,000
13	Ճարմանդներ	հատ	500	0,15	75,000
	Ընդամենը /հազ. դր./				**771,250**

	Ընդամենը /հազ. դր./				43258,610
	Շահույթ 11%				4758,447
	Ընդամենը /հազ. դր./				48017,057
	ԱԱՀ 20%				9603,411
	Ընդամենը /հազ. դր./				57620,468

Չափաբաժին 2

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

ջերմամեկուսացման աշխատանքներ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Արագածոտնի մարզ Տիգրան Մեծ 34 բազմաբնակարան շենքի էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների նախագիծ

N N	Աշխատանքների անվանումը	չ/մ	ծավալը	Միավորի արժեքը /հազ դրամ/	Ընդամենը /հազ դրամ/
1	2	3	4	5	6
	Շինարարական աշխատանքներ				
	Տանիքային աշխատանքներ				
1	Գոլորշամեկուսիչ շերտ պոլիպրոպիլենից	մ^2	424,3	0,35	148,505
2	Ջերմամեկուսիչ շերտ պատրաստում հանքաբամբակից 100մմ հաստությամբ	մ^2	424,3	1,95	827,385
3	Ջրամեկուսիչ,գոլորշաթափանց՝ պոլիպրոպիլենից հրակայուն	մ^2	424,3	0,55	233,365
4	Նրբատախտակ 12մմ	մ^2	10,2	8,50	86,700
5	Ձայտե չորսու 160x80	մ^3	0,65	150,00	97,500
6	40x40x4 մմ ալյումինե անկյունակ,L=100մմ,բ.600մմ	կգ	83,2	1,00	83,200
7	Հորանների ջերմամեկուսացում փայլաթիթեղապատ ապակեբամբակով 50մմ հաստ.49,8մ2	մ^3	2,49	30,00	74,700
8	10սմ հաստությամբ պ/բ միջնորմների շարվածք ամրանավորումով և բետոնացմամբ	մ^2	116,2	3,30	383,460
9	Շարվածքի ամրանավորում Ac-1	տն	0,232	470,00	109,040
10	Օդափոխության հորանների լավորակ ց/ավազե սվաղ 50x50x1,5մմ Br ցանցով	մ^2	232,4	4,00	929,600
11	Օդափոխության հորանների զոնտ 0,5մմ գունավոր տեսակի	մ^2	32,4	2,50	81,000
	Ընդամենը				**3054,455**
	Դռներ և պատուհաններ				
12	Մ/պլաստե ապակեփաթեթ սպիտակ պատուհանների տեղադրում բացվող հատված /պրոֆիլը 60մմ/	մ^2	4,86	35,0	170,1
13	Մ/պլաստե ապակեփաթեթ սպիտակ պատուհանների տեղադրում չբացվող հատված /պրոֆիլը 60մմ/	մ^2	7,02	32,0	224,64
14	Անոդացված ալյումինե ապակեփաթեթ արծաթագույն դռան տեղադրում ջեմոկամրջակով բացվող հատված /պրոֆիլը 60մմ/	մ^2	4,1	75,0	307,5
15	Մ/պլաստե ապակեփաթեթ արծաթագույն դռների տեղադրում /պրոֆիլը 60մմ/	մ^2	11,4	44,0	501,6
	Ընդամենը				**1203,84**
	Հարդարման աշխատանքներ				
16	Գոյություն ունեցող դռների ապամոնտաժում	մ^2	1,90	5,0	9,500
17	Շքամուտքի ներքին պատերի վրայի գոյություն ունեցող ներկածածկույթի մաքրում	մ^2	629,20	0,20	125,840
18	Շքամուտքի պատուհանների, արտաքին դռան ներքին շեպերի գաջե սվաղի քանդում	մ^2	15,57	0,40	6,228
19	20 սմ հաստությամբ պ/բլոկե պատերի շարվածք , անցքերի բետոնացմամբ և ամրանավորումով	մ^3	1,57	22,50	35,235

20	Շարվածքի ամրանավորում Ac-1	տն	0,05	470,0	23,500
21	Պատերի լավորակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ^2	268,80	1,5	403,200
22	Շքամուտքի ներքին պատերի գաջե սվաղի նորոգում	մ^2	165,0	2,0	330,000
23	Պատերի լավորակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ^2	281,0	1,50	421,500
24	Շեպությունների գաջե սվաղ	մ^2	15,570	2,50	38,925
25	Պատերի լավորակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ^2	15,570	1,50	23,355
26	Առաստաղի գաջե սվաղի նորոգում	մ^2	39,0	2,50	97,500
27	Շքամուտքի առաստաղի վրայի գոյություն ունեցող ներկածածկույթի մաքրում	մ^2	127,50	0,25	31,875
28	Առաստաղի լավորակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ^2	127,50	1,60	204,000
29	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	5,0	2,30	11,500
30	Մետաղական ճաղավանդակների 2 շերտ յուղաներկում	տն	0,786	30,0	23,580
31	50x30 չափսերի փայտ բռնակների համար	գմ	39,30	1,50	58,950
32	Նույնի յուղաներկում	մ^2	62,90	1,20	75,480
	Ընդամենը				**1920,168**
	Ջերմամեկուսացման աշխատանքներ				
33	Պատուհանների բացվածքների պարագծով 300մմ լայնությամբ հանքային բամբակի տեղադրում 80մմ հաստությամբ, ամրացնելով պոլիմերցեմենտային սոսնձով	մ^3	12,324	48,0	591,552
34	20 սմ հաստությամբ պ/բլոկե պատերի շարվածք , անցքերի բետոնացմամբ և ամրանավորումով	մ^3	4,8	22,5	108,000
35	Շարվածքի ամրանավորում Ac-1	տն	0,019	470,0	8,930
36	Պատուհանների բացվածքների /պատշգամբների հատվածում/ 300մմ լայնությամբ հանքային բամբակի տեղադրում 80մմ հաստությամբ, ամրացնելով պոլիմերցեմենտային սոսնձով	մ^3	0,672	48,0	32,256
37	Արտաքին հանքային բամբակի հակահրդեհային գոտի 300մմ բարձրությամբ, 80մմ հաստությամբ, ամրացնելով պոլիմերցեմենտային սոսնձով	մ^3	15,024	48,0	721,152
38	Արտաքին դռների 900x2400մմ բացվածքների պարագծով 300մմ լայնությամբ հանքային բամբակի տեղադրում 80մմ հաստությամբ, ամրացնելով պոլիմերցեմենտային սոսնձով	մ^3	1,363	48,0	65,424
39	Արտաքին պատերի ջերմամեկուսացում XPS-փրփրապոլիստիրոլով /80մմ/, ամրացնելով պոլիմերցեմենտային սոսնձով 1660մ2	մ^3	132,8	55,0	7304,000
40	Շենքի բոլոր անկյուններում լրացուցիչ ուժեղացում թիթեղյա անկյունակներով 50x50x5մմ /-0,00 +3,20 նիշերում/	տն	0,29	100,0	29,000
41	50x50x5մմ անկյունակի արժեքը	գմ	76,8	1,5	115,200
42	Ոչ մետաղական ցանց	գմ	230,4	0,5	115,200
43	Պատուհանների 1560x1560մմ բացվածքների պարագծով անկյուններում լրացուցիչ թիթեղյա անկյունակների տեղադրում 50x50x5մմ	տն	1,244	100,0	124,400
44	50x50x5մմ անկյունակի արժեքը	գմ	330,1	1,50	495,150
45	Արտաքին դռների 900x2400մմ բացվածքների պարագծով անկյուններում լրացուցիչ թիթեղյա անկյունակների տեղադրում 50x50x5մմ	տն	0,156	100,0	15,600
46	50x50x5մմ անկյունակի արժեքը	գմ	41,4	1,50	62,100
47	Ապակեթելքային ցանց /+3,00-+12,8 նիշերի հատվածումն աստիճանավանդակում/ պոլիմերցեմենտային հատուկ սոսնձով	մ^2	1245	0,750	933,750
48	Պատուհանների շեպությունների ց/ավազե սվաղ	մ^2	330,1	3,0	990,300
49	Պատերի լավորակ ց/ավազե սվաղ ցանցով 30մմ հաստությամբ 50x50x3մմ Br ցանցով	մ^2	415	4,30	1784,500
50	Արտաքին պատուհանագոգ 0,55մմ հաստությամբ ցինկապատ թիթեղից 63գմ	մ^2	12,6	4,50	56,700
51	Ճակատային ներկում, մածկապատումով	մ^2	1660	0,850	1411,000
	Ընդամենը				**14964,214**
	Նկուղի առաստաղի ջերմամեկուսացում				

52	Փրփրապլաստե 30մմ սալերի մոնտաժում առաստաղին ամրացնելով պոլիմերցեմենտային սոսնձով 424,3մ2	մ³	12,729	32,50	413,693
53	Ապակեթամբակի մոնտաժում առաստաղին փրփրապլաստի վրա 80մմ հաստությամբ	մ³	33,944	46,50	1578,396
54	Պլաստմասե խցաբութակ ф12-14մմ L-200մմ	հատ	2600	0,1650	429,000
	Ընդամենը				**2421,09**
	Էլեկտրատեխնիկական աշխատանքներ				
55	ԼԵԴ լուսատու հակավանդալային, շարժման և լուսավորության տվիչներով, գիշեր- ցերեկ ,8Վտ, 4000-4500K, 700Lm	հատ	20	7,50	150,000
56	ԼԵԴ լուսատու հակավանդալային, շարժման և լուսավորության տվիչներով, գիշեր- ցերեկ, 11Վտ, 4000-4500K, 1070Lm	հատ	15	9,00	135,000
57	Պլաստիկ երկտեղանոց տուփ, IP 40, մալուխային խցուկներով, արտաքին տեղադրման	հատ	1	2,50	2,500
58	Փոփոխական հոսանքի ավտոմատ անջատիչ 2Рx16Ա	հատ	1	5,00	5,000
59	Հողանցման հաղորդաձող	հատ	1	5,00	5,000
60	Բաժանման տուփ IP45, 100x100x60մմ մալուխային խցուկներով/	հատ	9	1,50	13,500
61	ВВГнг-LS 3x2.5մմ2 հատվածքով, պղնձե ջիղերով, մեկուսացված մալուխի անցկացում	գմ	20,0	0,850	17,000
62	ВВГнг-LS 3x1.5մմ2 հատվածքով, պղնձե ջիղերով, մեկուսացված մալուխի անցկացում	գմ	265,0	0,60	159,000
63	ՊՎՔ տուփախողովակ 25x16մմ	գմ	275,0	0,50	137,500
64	ՊՎՔ խողովակ 20մմ	գմ	20,0	0,50	10,000
65	Միջհարկային ծածկի մեջ անցքի բացում	տեղ	8	1,50	12,000
66	Անցքերի վերականգնում	հատ	8	2,00	16,000
67	Ճարմանդ	հատ	250	0,150	37,500
	Ընդամենը				**700,000**
	Ընդամենը				**24263,766**
	Շահույթ	**11%**			**2669,014**
	Ընդամենը				**26932,780**
	ԱԱՀ	**20%**			**5386,556**
	Ընդամենը				**32319,336**

* Կապալառուն աշխատանքները կատարում է **ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆ 9 Տիգրան Մեծ 34** - հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետարան
ՀՀ Արագածոտնի մարզ
Ք.Աշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7
ՀՎՀՀ՝ 05005705
ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900442101185
Համայնքի ղեկավար

---------- **Թ.Շահվերդյան**

ԿԱՊԱԼԱՌՈՒ

"Շինաշխարհ" ՍՊԸ
ք. Երևան, Գոգոլի փակուղի 32/1
ՀՎՀՀ - 00068694
Բանկ - "Հայբիզնեսբանկ" ՓԲԸ
ՀՀ - 1150000368440100
Էլ.փոստ- amshinashkharh@mail.ru
հեռ. 044 29-19-45

---------- **Ա.Մ անուշյան**
/ստորագրություն/
L.S

Հավելված թիվ 2
« 17 » հունիսի 2020 թ. կնքված
N ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՇՁԲ-20/3/1 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ջերմամեկուսացման աշխատանքներ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	**ջերմամեկուսացման աշխատանքներ** (Արամ Մանուկյան 9շենքի էներգարդյունավետ արդիականացման աշխատանքներ)	*ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու* օրվանից	180-րդ օրացուցային օրը ներառյալ
2	**ջերմամեկուսացման աշխատանքներ** (Տիգրան Մեծի 34 շենքի էներգարդյունավետ արդիականացման աշխատանքներ)	*ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու* օրվանից	180-րդ օրացուցային օրը ներառյալ
ԸՆԴԱՄԵՆԸ			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետարան
ՀՀ Արագածոտնի մարզ
Ք.Աշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7
ՀՎՀՀ՝ 05005705
ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900442101185
Համայնքի ղեկավար

----------Թ.Շահվերդյան

ԿԱՊԱԼԱՌՈՒ

"Շինաշխարհ" ՍՊԸ
ք. Երևան, Գոգոլի փակուղի 32/1
ՀՎՀՀ - 00068694
Բանկ - "Հայբիզնեսբանկ" ՓԲԸ
ՀՀ - 1150000368440100
Էլ.փոստ - amshinashkharh@mail.ru
հեռ. 044 29-19-45

----------Ա.Մանուկյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
			... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
			... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
« 17 » հունիսի 2020 թ. կնքված
N ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՇՁԲ-20/3/1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____

հհ _____

հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____

հհ_____

հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 4.1
« 17 » հունիսի 2020 թ. կնքված
***N ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՇՁԲ-20/3/1** ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն